

**ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(Վերանայված տարբերակ)**

**ԵՆԹԱԾՐԱԳԻՐ IV, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ
Ծրագիր՝ L2860-ICB-1-03**



**Երևան
Հունիս 2015թ.**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	Ասիական գարգացման բանկ
ՀԽ	Հանրային խորհրդատվություն
ՀԿ	Հայաստանի կառավարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՀՕՏՇ	Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակ
ՀԶԿ	Հայջրնուղկոյուղի
ԶՏՊԿ	Զրային տնտեսության պետական կոմիտե
ԶՄԿ	Զրի մաքրման կայան
ԶևԶ	Զրամատակարարում և ջրահեռացում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՕԿԶ	Օրվա կարգավորման ջրամբար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
Ա. Ծրագրի նախադրյալները	4
Բ. Ծրագրի գործունեության շրջանակները	4
Գ. Ենթաձրագիր IV-ի նախագծային առանձնահատկությունները	5
Դ. Հաշվետվության նպատակն ու շրջանակները	6
II. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ	6
III. ՀՕՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄ	6
IV. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ	9
V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Ծրագրի նախադրյալները

1. Ջրամատակարարման և Ջրահեռացման(ՋևՋ) ծրագրի Փուլ I-ի հաջող իրականացումից հետո, Հայաստանի կառավարությունը՝(ՀԿ) Ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ) միջոցով դիմել է Ասիական զարգացման բանկին (ԱԶԲ)՝ նոր ծրագրի ֆինանսավորման աջակցության խնդրանքով: ԱԶԲ-ն համաձայնել է տրամադրել ՀԿ-ը 40 մլն. ԱՄՆ դոլար վարկ՝ 10 ենթածրագրի շրջանակներում ջրամատակարարման և ջրահեռացման (ՋևՋ) համակարգերի վերականգնման և ընդլայնման, ինչպես նաև Հայջրմուղկոյուղի ընկերության (ՀՋԿ) գործառնական արդյունավետության և ֆինանսական կառավարման բարեփոխումների համար:
Լրացուցիչ ֆինանսավորման՝ ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ծրագրի, II փուլը ներառում է 18 քաղաք և 92 գյուղ, որտեղ իրականացվելու են վերը նշված գործառույթները: 10 ենթածրագրերի շրջանակներում նախատեսվում է ներդրում 10 մարզերում: Ենթածրագրի IV-ի համար մշակվել է սույն հարկադիր տարաբնակեցման հետազոտական հաշվետվությունը վստահ լինելու համար, որ ծրագիրը բացառում է հողի օտարման և տարաբնակեցման ազդեցություններ:

Բ. Ծրագրի գործունեության շրջանակները

2. Ծրագրի նպատակն է՝ (ա) վերականգնել և արդիականացնել ջրամատակարարման ենթակառուցվածքները, (բ) բարելավել ջրամատակարարման ծառայությունների արդյունավետությունը և (գ) բարելավել ջրմուղկոյուղի ընկերության կառավարման և գործառնական արդյունավետությունը:
3. Արդյունքում, ծրագիրը կապահովի առողջապահական և բնապահպանական բարեփոխումներ, ապահովելով հուսալի խմելու ջրամատակարարում շահառու տնային տնտեսություններին: Այն նաև կաջակցի աղքատության կրճատմանը՝ հետևյալի միջոցով՝ (i) նվազեցնելով ջրի միջոցով տարածվող հիվանդությունների և բժշկական օգնության ծախսերի մակարդակը, (ii) խնայելով կանանց ժամանակը այնպիսի ինտենսիվ տնային աշխատանքի կրճատման շնորհիվ, ինչպիսին է ջրի հավաքումը, ինչը կարող է թույլ տալ նրանց ավելի ակտիվորեն ընդգրկվելու սոցիալական և տնտեսական գործունեության մեջ, (iii) ապահովելով անվտանգ և ավելի հուսալի ջրամատակարարում. և (iv) բարելավելով տնային տնտեսությունների կյանքի որակը ծրագրի բոլոր քաղաքներում և գյուղերում՝ նրանց համար անվտանգ և կայուն խմելու ջրի հասանելիությունը բարելավելու միջոցով:
4. Ծրագիրը կապահովի անվտանգ, հուսալի ջրամատակարարում 112 համայնքներում՝ 10 մարզերի 18 քաղաքներում և 94 գյուղական համայնքներում (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Տավուշ, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք և Վայոց Ձոր): Ծրագիրը կիրականացվի ենթածրագրերի միջոցով:

Գ. Ենթաձրագիր IV-ի նախագծային առանձնահատկությունները

- Շահառու համայնքներում ցանցը հիմնականում կառուցվել է 1960-70-ական թվականներին: Հրազդան, Ծաղկաձոր, Չարենցավան և Աբովյան քաղաքներում որոշ ջրագծեր և ջրաչափական հանգույցներ կառուցվել են Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարում և ջրահեռացում ծրագրի/ՀԶԶԾ և ՀԶԶԾ-Լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի շրջանակներում: Քաղսի գյուղում ՕԿԶ կառուցվել է 2010-2011թթ. ԱԶԲ կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում:
- Ենթաձրագիր IV -ում նախատեսվում է i) պոլիէթիլենե խողովակների վերակառուցում և կառուցում, ii) մասնավոր տների մուտքագծերի փոխարինում, iii) ջրաչափական հանգույցների տեղադրում երկաթբետոնե հորերում, ինչպես նաև թաղված փականային հանգույցների կառուցում և վերակառուցում հետևյալ համայնքներում՝ Հրազդան Ծաղկաձոր, Չարենցավան և Աբովյան քաղաքներ, Քաղսի, Ակունք և Սուլակ գյուղեր: Ակունք համայնքում կվերանորոգվի գոյություն ունեցող պոմպակայանը՝ տեղադրելով նոր մղվող ագրեգատներ: Ծաղկաձորում կկառուցվի նոր 1000մ³ ՕԿԶ:
- Ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով ենթաձրագրի լրացուցիչ բնակավայրերում աշխատանքային նախագծով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները: Իրականացվող աշխատանքների ամփոփ նկարագիրը տես ստերն՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Ծրագրով նախատեսված գործողություններն ըստ ենթաձրագրի համայնքների

Աշխատանքներ	Չ/Մ	Փաթեթ IV.1		Փաթեթ IV.2		Փաթեթ IV.3			Ընդ.
		Ք. Հրազդան	Գ. Քաղսի	Ք. Ծաղկաձոր	Գ. Ակունք	Ք. Չարենցավան	Գ. Սուլակ	Ք. Աբովյան	
Ջրատարի վերակառուցում	կմ			3.227	0.905	-	1.250	-	5.382
Ջրագծերի փոխարինում de315 - de40 պոլիէթիլենային խողովակներով	կմ	23.774	9.940	3.050	9.220	12.552	6.410	3.630	46.366
Անհատական տների մուտքագծերի տեղադրում de32 – de20 պոլիէթիլենային խողովակներով	կմ	5.735	2.800	0.300	3.116	0.132	1.624	0.335	22.592
Բազմաբնակարան շենքերի մուտքագծերի տեղադրում	կմ					6.6825	0.040	0.402	7.297
Թաղված փականային հանգույցների կառուցում	հատ					7	12	1	20
Ջրամատակարարման հորերի կառուցում	հատ					49	4	5	58
Հակահրդեհային հիդրանտի կառուցում	հատ					5	2	3	10
Ջրաչափական հորերի տեղադրում	հատ	631	295	30	460	13	180	30	1639

Դ. Հաշվետվության նպատակն ու շրջանակները

8. Տվյալ հաշվետվության նպատակն է ուսումնասիրել Ենթաձրագիր IV-ի հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) ազդեցությունը՝ հիմնվելով աշխատանքային նախագծի վրա և, անհրաժեշտության դեպքում, առաջարկել մեղմացնող միջոցառումներ՝ ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության կանոնակարգի համաձայն (2009թ.):
- Սույն հաշվետվությունը մշակվել է Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի ձրագիր-լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի շրջանակներում (2012):

II. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՄԱՐ

9. Անվտանգության դասակարգման առումով Ծրագիրը՝ հարկադիր տարաբնակեցման ազդեցության սահմանափակ ազդեցության տեսանկյունից սահմանվել է Բ դասի: Նախնական, այնուհետև աշխատանքային նախագիծը ցույց է տվել, որ վերականգնման և շինարարական աշխատանքները իրականացվելու են ՀԶԿ-ի սեփականություն հանդիսացող տարածքներում, քաղաքային/համայնքային հողերում, կամ քաղաքային/համայնքային ենթակառուցվածքի համար օտարված գոտիներում: Այսպիսով, հողի օտարում չկա և ՀՕՏ պահանջ ևս չկա:
10. ՀԶԿ-ի Ծրագրի (II Փուլ) Հողի օտարման և տարաբնակեցման շրջանակները (ՀՕՏԸ) մշակվել են §Հայջրմուղկոյուղի՝ ընկերության (ՀԶԿ) կողմից և հաստատվել ՀՀ Տարածքային Կառավարման Նախարարությանն առընթեր Ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ), այնուհետ՝ ՀՀ կառավարության կողմից 2012թ. մարտին: Փաստաթուղթը նկարագրում է այն մեխանիզմները, ընթացակարգերը և փոխհատուցման իրավունքները, որոնք պետք է կիրառվեն Հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) ծրագրման և իրականացման ժամանակ:

III. ՀՕՏ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄ

11. Աշխատանքային նախագծի հիմնական նախապայմաններից մեկը ՀՕՏ ազդեցությունից խուսափելն է, քանի որ ՀՕՏԸ-ը նշում է, որ ենթաձրագրերը, որոնք ներառում են մասնավոր սեփականության օտարում և/կամ հանգեցնում են զգալի ՀՕՏ ազդեցությունների, չեն համապատասխանում ծրագրի ֆինանսավորման պահանջներին և, հետևաբար, պետք է հանվեն ծրագրից:
12. Ուստի, աշխատանքային նախագծի յուրաքանչյուր բաժինը մշակելուց առաջ, նախապես ուսումնասիրվել են յուրաքանչյուր համայնքի կադաստրային քարտեզները՝ պարզելու, արդյոք կան մասնավոր կամ օգտագործվող հողերի և առկա ջրատարերի որևէ

համընկնումներ: Կադաստրային քարտեզների ճշգրտում իրականացվել է նաև տեղում՝ անհրաժեշտության դեպքում հիմնվելով ուսումնասիրությունների ու չափումների վրա: Ստուգելուց հետո աշխատանքային նախագծում օրինական/ապօրինի օգտագործվող հողերի/կառույցների վրա ազդեցությունը բացատրվել է:


13. Աշխատանքային նախագծում կիրառված հիմնական սկզբունքները.

- i. Խողովակները տեղադրվել են այն տեղամասերում, որոնք արդեն օգտագործվել են նույն նպատակով և/կամ պատկանում են համայնքի ղեկավարությանը;
- ii. Նոր գծերն ընտրվել են համայնքների փողոցներում, ինչի շնորհիվ հնարավոր է եղել խուսափել ՀՕՏ-ից, ինչպես նաև ապագայում համայնքի անդամների կողմից օգտագործվող հողերի օգտագործումից: Սա նաև կապահովի ենթակառուցվածքի ավելի հեշտ տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև կկանխարգելի ջրի ապօրինի օգտագործումը խողովակաշարերի ցանցից:
- iii. Հողի մասնավոր օգտագործման դեպքում տրվել է նոր նախագծային լուծում՝ ազդեցությունները բացառելու նպատակով: Հրազդան, Ծաղկաձոր և Աբովյան համայնքների շինարարական աշխատանքները ցույց են տրված ստորև բերված Պատկեր.1, 2 և 3-ում:
- iv. Բոլոր նախագծերը ներկայացվել են, վերանայվել, համաձայնեցվել և հաստատվել ՏԻՄ-երի կողմից: Ջրատարերի փոքր փոխարինումները նույնպես հաստատվել են ՏԻՄ-երի կողմից: Նախագիծը նաև նայվել և հաստատվել է կոմունալ սպասարկման կազմակերպությունների հետ, ինչպես օրինակ՝ ԱրմենՏել ՓԲԸ, ԳազՊրոմ Արմենիա ՓԲԸ, Հայաստանի էլեկտրական Ցանցեր ՓԲԸ:
- v. Համայնքային հողատարածքներում ջրատարերի վերատեղադրման դեպքում նախագծով նախատեսվում է, որ ճանապարհի/հողի մայթերը պետք է փոխարինվեն նույն տեսակի մայթերով:


Պատկեր 1. Հրազդան համայնք

Պայմանական նշաններ

- *հին խողովակներ*
- *նոր խողովակներ*
- ✕ ✕ *շահագործումից դուրս բերվող խողովակներ*



Պատկեր 2. Ծաղկաձոր համայնք



Պայմանական նշաններ


Գոյություն ունեցող ջրագծեր
Առկա ապամոնտաժվող ՕԿՁ

Նոր կառուցվող ՕԿՁ

ՕԿՁ-ի սանիտարական գոտու
ցանկապատ՝ տրամադրված ՀՋԿ-ի
կողմից

Առկա բարձր լարման գիծ

Պատկեր 3. Արվյան կենտրոն թաղամաս



Պայմանական նշաններ

- Φ — Բաշխիչ ցանցի գոյություն ունեցող ջրագծեր
- Φ — Շահագործումից դուրս բերվող ջրագծեր
- Φ — Բաշխիչ ցանցի վերակառուցված ջրագծեր (նախորդ ծրագրերով)
- de — Բաշխիչ ցանցի վերակառուցվող կամ նոր նախատեսվող ջրագծեր

14. Ծրագրի նախագիծն իրականացվել է շահառու ընկերությունների հետ սերտ համագործակցությամբ:

- Հանրային իրազեկումը ծրագրի և նախագծի վերաբերյալ ապահովվել է աշխատանքային նախագծի փուլում ՏԻՄ-երի ներկայացուցիչների և շահառու համայնքների անդամների հետ Հանրային Խորհրդատվությունների (ՀԽ) միջոցով (տես Աղյուսակ 2): Բոլոր նախագծերը ներկայացվել են, քննարկվել և համաձայնեցվել ՏԻՄ-երի հետ: Համաձայնության գալուց հետո բոլոր նախագծերը հաստատվել են ՏԻՄ-երի կողմից:

Աղյուսակ 2. Կոտայքի ենթածրագրի շրջանակներում իրականացված հանրային իրազեկման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Հ/հ	Համայնք	Ամիս, ամսաթիվ	Վայրը	Տևողություն	Մասնակի ցների թիվը	Այդ թվում՝ կանայք	Կին մասնակիցների %-ը
1	ք.Չարենցավան	23.12.2014	քաղաքապետարան	50րոպե	24	11	45.8
2	ք.Աբովյան	24.12.2014	քաղաքապետարան	30րոպե	12	7	58.3
3	գ.Սոլակ	23.12.2014	գյուղապետարան	40րոպե	22	11	50.0
4	ք. Հրազդան	25.07.2013	ք.Հրազդանի Օրհուսի կենտրոն	1ժամ 40 րոպե	17	11	64.7
5	գ.Քաղսի	25.07.2013	Քաղսիի գյուղապետարան	1ժամ 20րոպե	14	9	64.3
6	ք. Ծաղկաձոր	3.02.2014	ՀԶԿ ՓԲԸ-ի «Ծաղկաձոր» տեղամաս	1ժամ	21	14	66.7
7	գ.Ակունք	3.02.2014	Ակունքի գյուղապետարան	1 ժամ	18	2	11.1
Ընդամենը					128	65	50.8

IV. ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ և ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

15. Ենթածրագրի IV -ի շրջանակներում չի ակնկալվում զգալի մշտական և ժամանակավոր ազդեցություն, քանի որ շահագործման և տեխնիկական սպասարկման գործունեությունը հիմնականում իրականացվելու է ՀԶԿ-ի սեփականություն հանդիսացող տարածքներում, կամ համայնքին պատկանող հողերում, ինչպես նաև համայնքային ենթակառուցվածքների համար օտարված գոտիներում:
16. Այնուամենայնիվ, ենթածրագրի ազդեցությունը չի տարածվում մասնավոր հողերի կամ համայնքային հողերի վրա, որոնք օգտագործվում են համայնքների անդամների կողմից: Նույն հաջողությամբ, ջրի փոխանցման խողովակների շինարարությունը ազդեցություն չի թողնի ձեռներեցության վրա: Ճանապարհները և ճամփեզրերը բավականին լայն են, որը խոչընդոտներ և եկամտի կորուստ չի առաջացնում բնակիչների համար: Բացի այդ, շինարարները կապահովեն ժամանակավոր անցում շինարարական աշխատանքների ընթացքում:
17. Ջրամատակարարման խողովակների և ջրամբարի վերակառուցման ընթացքում նախագծային տարածքներում տնային տնտեսությունների և բիզնեսների ջրամատակարարման վրա ազդեցություն չի ակնկալվում: Նմանատիպ ազդեցությունները վերացնելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝ չնայած դրանց կարճատևությանը.
 - i. Բոլոր բնակիչներին և առևտրականներին նախապես աշխատանքի բնույթի և ընթացքի վերաբերյալ տեղեկության տրամադրում, որպեսզի նրանք կարողանան անհրաժեշտ նախապատրաստություններ կատարել,

- ii. Աշխատուժի ավելացում և համապատասխան սարքավորումների տրամադրում՝ այդ հատվածներում աշխատանքները նվազագույն ժամկետում ավարտելու համար, և
 - iii. Հին համակարգից տնային տնտեսությունների ու ձեռնարկատիրական հաստատությունների միացումները անջատելուց առաջ ճշգրտում, որ նոր համակարգին միացումը լավ համակարգված է:
18. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր է մուտքի ժամանակավոր սահմանափակում կամ դժվարանցանելիություն: Հետևյալ կետերը պետք է ընդգրկվեն Կապալառուի պայմանագրի մեջ՝ վերհռիշյալ խնդիրների ազդեցությունը մեղմացնելու կամ չեզոքացնելու համար:
- i. Նախքան քաղաքաշինական աշխատանքների սկիզբը, շինարարության Կապալառուն պետք է երաշխավորի այլընտրանքային լուծում, որը կապահովի համայնքի անդամների մուտքն իրենց հողատարածք կամ բնակության վայր:
 - ii. Մուտքի այլընտրանքային լուծման բացակայության դեպքում Կապալառուն պետք է իր աշխատանքները ծրագրի այնպես, որ տեղի բնակիչները չտուժեն: Կապալառուն պետք է նախօրոք տեղեկացնի բոլոր բնակիչներին և առևտրականներին աշխատանքի բնույթի և տևողության մասին, որպեսզի վերջիններս ձեռնարկեն համապատասխան միջոցներ:
 - iii. Սպառողի մուտքը գործող բիզնես պահպանելու համար կապալառուն պետք է խրամուղիների վրայով որոշակի միջակայքերում ապահովի փայտե անցուղիներ և համապատասխան մուտք՝ մեքենաների համար:
 - iv. Որոշակի չկանխատեսված դեպքերում, երբ հողատերը կորցնում է իր բերքը հողատարածք մուտք չունենալու պատճառով, Կապալառուն պետք է զեկուցի շինարարության վերահսկողության խորհրդատուին և դադարեցնի շինարարական աշխատանքները ազդակիր տարածքներում, մինչև բերքի կորստի փոխհատուցումը, ինչպես նշված է ՀՕՏՇ դրույթներում:
 - v. ՀՋԿ ՓԲԸ-ն կվերահսկի շինարարության ազդեցությունը՝ համաձայն նկարագրված ընթացակարգերի և մոտեցումների:
19. Խորհրդատուի բնապահպանական և սոցիալական ազդեցության մասնագետը կիրականացնի շինարարության ազդեցության մոնիթորինգ՝ նկարագրված ընթացակարգերի եւ մոտեցումների համապատասխանության ապահովման նպատակով:

V. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

20. Ենթածրագիր IV-ի համար հարկադիր տարաբնակեցման ազդեցությունների ուսումնասիրությունից հետո մշակվել է համալիր հետազոտական հաշվետվություն, վստահ լինելու համար, որ ենթածրագիրը չի ունենա ՀՕՏ ազդեցություններ: Ե՛վ ժամանակավոր, և՛ մշտական ազդեցությունները քննարկվել և վերլուծության են ենթարկվել ուսումնասիրության ընթացքում.
21. Ենթածրագիր IV-ը ընդգրկում է գոյություն ունեցող ֆիզիկական կառուցվածքների վերականգնում և բարելավում: Աշխատանքային նախագիծը հաստատում է, որ

վերականգնումն ու շինարարությունն իրականացվելու են ՀԶԿ-ի սեփականություն հանդիսացող կամ համայնքապատկան տարածքներում, համայնքային ենթակառուցվածքների համար օտարված գոտիներում և 1 մասնավոր հողամասում:

- i. Միջոցառումները, անկախ սեփականատիրության կարգավիճակից կամ հողի տվյալ պահին օգտագործումից, չեն պահանջում զգալի մշտական կամ ժամանակավոր հողերի օտարում:
- ii. Բիզնեսի կամ այլ եկամուտ առաջացնող գործունեությունների վրա որևէ ազդեցություն չի ակնկալվում:
- iii. Որևէ մեկի մուտքը դեպի կառույցներ, բնական ռեսուրսներ կամ սպասարկման տարածքներ չի սահմանափակվի:

22. Շինարարության փուլում ՀԶԿ-ն կիրականացնի շինարարական աշխատանքների վերահսկողություն ցանկացած ժամանակավոր/մշտական ազդեցության, ինչպես օրինակ՝ բիզնեսի կամ այլ կենսական ռեսուրսների հասանելիության սահմանափակման և այլ առումով: Շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված ցանկացած ազդեցություն անմիջապես կհաղորդվի ԱԶԲ և կփոխհատուցվի ՀՕՇ դրույթների հիման վրա: